Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Վեղի քաղաքի Խաչիկ Սողոմոնյանի անվան հ. 2 հիմնական դպրոց

Թեմա՝ Առարկայական զուգադրումների և եռադրումների իրականացումը մայրենիի դասերին

Վերապատրաստող, մենթոր՝ Հասմիկ Չարխչյան

Ուսուցիչ՝ Արևիկ Մանուկյան

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾՈՆ

1.1 ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԶՈՒԳԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԵՌԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻ ԴԱՍԵՐԻՆ 5

1.2 ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԶՈՒԳԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԵՌԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻ ԴԱՍԵՐԻՆ ՈՐՊԵՍ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑ 7

ԳԼՈՒԽ 2. ՄԱՅՐԵՆԻ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՔԱՌԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐՆԵՐՈՎ

2.1 ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՄԱՅՐԵՆԻ ԴԱՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ 10

2.2 ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ԹԵՄԱՏԻԿ ՔԱՌԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԸ ՄԱՅՐԵՆԻ ԴԱՍԵՐԻՆ 12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 24

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդն իր իմացական գործունեությամբ ստեղծել է գիտության բազմազան բնագավառներ, որոնք համառոտ և հանրամատչելի ձևով որպես ուսումնական առարկաներ դասավանդվում են հանրակրթական դպրոցում: Վերջիններս օգնում են բացահայտելու մեզ շրջապատող աշխարհն իր բազմազան երևույթներով ու իրադարձություններով, կանխատեսելու դրանց շարժը: Ուսուցանվող առարկաներից յուրաքանչյուրն արտացոլում է գիտության տվյալ բնագավառի հիմնական գիտելիքները, դրանց կապերը, օրինաչափություններն ու առանձնահատկությունները, սակայն բազմաթիվ և բազմապիսի գործընթացներ ու երևույթներ կան, որոնք անբաժանելի միասնություն են ներկայացնում, և դրանց բաղադրիչների առանձին ու անկախ ուսումնասիրությունը ամբողջության մասին ճիշտ պատկերացում չի տալիս:

Այսինքն՝ և՛ բնության մեջ, և՛ կյանքում առանձնացված առարկաներ, երևույթներ և գործընթացներ չկան, դրանք գտնվում են որոշակի պայմանավորվածություն ունեցող համակարգերի կազմում: Ուստի առանձին առարկաները, երևույթները և գործընթացներն ամբողջությամբ ճանաչելու համար անհրաժեշտ է դրանք դիտել տվյալ համակարգի բոլոր մասերի՝ միմյանց հետ ունեցած կապերի և հարաբերությունների մեջ: Երևույթի կամ գործընթացի ամբողջական ճանաչողությունը ենթադրում է համապատասխան գիտելիքների միավորում:

Ենթադրվում է, որ մայրենիի դասավանդման մեթոդիկան պիտի վերազինվի այնպիսի մոտեցումներով, որոնց միջոցով արդի դպրոցի շրջանավարտն ունակ լինի պատասխանելու ժամանակի մարտահրավերներին: Մեր օրերում դպրոցում սովորողի ստացած կրթությունը միտված է ճանաչել և գիտակցել աշխարհի ամբողջականությունը:

Այսպիսով, սույն հետազոտական թեմայի **արդիականությունը** պայմանավորված է շրջակա աշխարհն ու տարաբնույթ երևույթները ամբողջության մեջ ուսումնասիրելու անհրաժեշտությամբ, այդ խնդրի՝

տարրական դպրոցում ուսումնասիրվող դասընթացներում համալիր իրականացմամբ:

Մեր ուսումնասիրության նպատակն է մշակել տարրական դպրոցում մայրենիի դասերի ընթացքում առարկայական ինտեգրումների հնարավոր տարբերակներ և հիմնավորել դրանց արդյունավետությունը:

Մեր ուսումնասիրության **նորույթը**. Իբրև միջառարկայական կապեր դիտարկել ենք թեմատիկ միավորումները քառադրումների միջոցով և վերլուծել այդ ճանապարհով վարած մայրենիի դասերը:

Ուսումնասիրության ընթացքում կիրառել ենք հետևյալ **հետազոտական մեթոդները**.

- Հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականության ուսումնասիրում,
- Դասալսումներ և հեղինակային դասի վարում II դասարանում, արդյունքների վերլուծում,
- Հարցազրույց տարրական դասարանների ուսուցիչների հետ,
- Փորձարարական դասերի մշակում և ներդնում:

ԳԼՈՒԽ 1

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾՈՆ

1.1 ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԶՈՒԳԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԵՌԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ

Անառարկելի է, որ տարրական դպրոցում մայրենիի ուսումնասիրումը առանձնահատուկ տեղ ունի ոչ միայն կարդալու կարողության ձևավորման, խոսքի զարգացման, լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրման, այլև որպես աշխարհաճանաչողության, անձի ձևավորման, նրա մտավոր առաջընթացի, հոգեկան գործընթացների հիմնական միջոց, մյուս կողմից՝ որպես ուսումնական մնացած բոլոր առարկաների ընկալման և յուրացման նախադրյալ:

Նկատի ունենալով, որ «Օբյեկտիվորեն գոյություն ունեցող երևույթներն ու փաստերը կարող են ընկալվել և ուսումնասիրվել այլ երևույթների հետ փոխադարձ կապի ու փոխգործողությունների համապատկերում>>[6, էջ 4], դպրոցական բոլոր դասընթացներում, ի թիվս մայրենիի, կիրառում են միջառարկայական կապեր, որոնց իրականացումը արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր թեմա ուսումնասիրել համակողմանիորեն, տարբեր կապերի բացահայտման տեսանկյունով: Այդ կերպ գիտելիքները կդառնան միասնական ամբողջություն՝ նպաստելով ընդհանուր ուսուցմանն ու երեխաների զարգացմանը: Այդ իմաստով նշանակալի է առարկայական ինտեգրման դերը: Ուսումնասիրություններն ու մեր պրակտիկ փորձը ցույց են տվել, որ առարկայական ինտեգրումը նպաստում է նոր ուսումնական նյութի խորքային յուրացմանը, անցածի և անցնելիքի միջև տրամաբանական կապերի ստեղծմանը, ձեռք բերած գիտելիքների ու կարողությունների փոխանցմանն ու կիրառմանը:

Տարրական դպրոցի մայրենիի արդի **ծրագրերը**, ներկայացված են որոշակի բաժանումներով և առարկայական ինտեգրման հնարավորություն են տալիս:

Մենք, մեր մանկավարժական փորձով համոզվել ենք, որ մայրենիի ուսումնասիրումը տարրական դպրոցում առավելապես կապահովի իր արդյունավետությունը և սովորողների լեզվաքերականական գիտելիքների ու լեզվագործածության կարողությունների, լեզվական ու գրական ճաշակի զարգացման հետ միասին նաև բնության, մարդու և հասարակական կյանքի մասին տվյալ տարիքին ու կրթական մակարդակին համապատասխան գործնական ու մատչելի գիտելիքների ձեռքբերումը, եթե դասընթացն իրականացվի ինտեգրված ուսումնական ծրագրով, որի ելակետերից մեկն այն հիմնական դրույթն է, ըստ որի՝ «ուսումնադաստիարակչական գործընթացում իրականության երևույթները պետք է ուսումնասիրվեն իրենց փոխկապակցության մեջ: Այդ ծրագրերի հիմնական հատկանիշը կոմպլեքսայնությունն է» [8, էջ 4]: Այսինքն՝մայրենիի դասերի ընթացքում իրականության տարբեր բնագավառների, տարբեր երևույթների միջև գոյություն ունեցող կապերի բացահայտումն աշակերտին հնարավորություն կտա ճանաչել «յուրաքանչյուր երևույթի բոլոր կողմերն ու միջնորդավորումները»: Մայրենիի դասերի կազմակերպման նման մոտեցումը նպաստում է տարբեր բնագավառների, տարբեր երևույթների միջև գոյություն ունեցող իրական կապերի ըմբռնմանը, ընդլայնում է կրտսեր դպրոցականի մտահորիզոնի ընդարձակմանը և և ձևավորում է ամբողջական աշխարհայացք: Միաժամանակ, մայրենիի՝ ուսումնասիրումը միջառարկայական կապերի կիրառմամբ բացառում է առարկաների կամայական և հաճախ արհեստական սահմանները և սովորողին հնարավորություն է տալիս յուրաքանչյուր թեմա ուսումնասիրելիս՝ օգտագործել նախկինում առանձին առարկաներից ստացած գիտելիքներն ու մշակված հմտությունները:

Միջառարկայական կապեր կարելի է ստեղծել ինչպես երկու, այնպես էլ երեք և ավելի դասընթացների միջև: Այս իմաստով այդ կապերը նաև կարելի է անվանել եռադրումներ, զուգադրումներ:

Առարկայական զուգադրումներով կամ եռադրումներով ուսումնական ծրագրերը կարող են հանդես գալ տարբեր ձևերով: Նշանակալի է, հատկապես բովանդակության ինտեգրումը, որը մեզանում հայտնի է «միջառարկայական

կապեր» անվանմամբ և վերաբերում է առարկաների ներսում և տարբեր ուսումնական առարկաների միջև եղած բովանդակային կապերին:

Մենք մեր վարած դասերի ընթացքում համոզվել ենք, որ որևէ նյութ ուսումնասիրելիս զուգադրումներ են կատարվում դասավանդվող այլ առարկաներից, /օրինակ՝ <<Մայրենիի>> դեպքում՝ <<Ես և շրջակա աշխարհից>>/, որոնք նպաստում են աշակերտների կողմից տվյալ թեմայի վերաբերյալ ավելի ամբողջական պատկերացումների ձևավորմանը:

Այսպիսով՝ մայրենիի դասերի կազմակերպումը զուգադրված կամ եռադրված ուսումնական ծրագրերի միջոցով (միջառարկայական կապերի վրա հիմնված) ավելի շատ սովորելու հնարավորություն է տալիս՝ միմյանց կապելով տարբեր առարկաների ընդգրկման ոլորտները և արտացոլելով իրական աշխարհը՝ իր բոլոր կողմերով: Արդյունքում՝ ձեռք բերած գիտելիքներն «օրգանապես լրացնելով և հարստացնելով միմյանց՝ անհրաժեշտ պայմաններ են ձևավորում իրականության առավել խոր, համակողմանի ընկալման ու իմաստավորման համար>>: Աշակերտներն ստանում են գեղագիտական, բարոյական դաստիարակություն և ըստ այդմ՝ կյանքին նախապատրաստվելու լայն հնարավորություններ: Այդ պատճառով էլ դրանք չեն կարող զուտ մայրենիի դասեր համարվել:

1.2 ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԶՈՒԳԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԵՌԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ ՈՐՊԵՍ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑ

Դեռևս վաղ տարիքից ձևավորվում են երեխաների պատկերացումներն աշխարհի մասին: Սակայն դպրոց ընդունվելով՝ միանգամից աղճատվում է այդ ամբողջական ընկալումը, և դրվում են սահմաններ՝ առանձին առարկաների տեսքով: Կրթական մյուս աստիճաններում էլ դպրոցում ձեռք բերած գիտելիքները շարունակում են մնալ որպես առանձին տեղեկույթ՝ տարբեր ուսումնական առարկաների տեսքով, և սովորողն այդպես էլ չի կարողանում կրթական մյուս աստիճաններում ամբողջացնել իր ձեռքբերածը: Լավագույն դեպքում ավելանում է սովորողների գիտելիքների պաշարը, որը հանգեցնում է

ավելորդ ծանրաբեռնվածության՝ չձևավորելով ճանաչողությունից ստացվող հաճույքի զգացողությունը:

Ուսումնասիրություններն ապացուցում են, որ ժամանակի ընթացքում երեխաները չեն կարողանում ջրի կաթիլի մեջ տեսնել ամբողջ օվկիանոսը կամ ծառի հետևում՝ անտառը: Իսկ չէ՞ որ կրթության նպատակն է՝ պատրաստել լայն մտահորիզոնով քաղաքացու, որն օժտված լինի յուրացված գիտելիքները համակարգելու և ըստ անհրաժեշտության դրանք կիրառելու կարողությամբ, դժվարություններից չվախեցող և պատրաստ օգտագործելու ստացած գիտելիքները ծառացած խոչընդոտները հարթելու գործընթացում:

Ուստի հենց տարրական դպրոցում երեխան պիտի ունենա համակարգված և ամբողջական ընկալում բնության և նրա երևույթների վերաբերյալ: Հետևաբար, անհրաժեշտ է, որ նա առարկան և երևույթը քննի տարբեր կողմերից՝ զգայական, գեղարվեստական, գիտական և այլն: Այս ճանապարհն ընտրելու դեպքում սովորողն զբաղվում է ստեղծագործական աշխատանքով: Շարունակ փոխում է գործունեության ոլորտը, դա էլ հետաքրքիր է դարձնում աշխատանքը: Աշակերտը սովորում է համակարգել ստացած տեղեկատվությունը, որն էլ անհրաժեշտ է հետագայում ավելի բարձր կարգի մտածողության անցնելու համար: Այսպես առարկաների միջև կապերն ավելի ու ավելի են սերտանում, լրացնում միմյանց ու նպաստում երևույթի բազմակողմանի (տարբեր առարկաների տեսքով) դիտարկմանը և ընկալմանը:

Միասնացում ասելով՝ չպետք է հասկանալ միայն առնչակից առարկաների միավորումը, երևույթը բազմաշերտ է և բազմիմաստ: Փորձենք խմբավորել տարրական դասարաններում անհրաժեշտ և պարտադիր միասնացման առավել ընդհանուր ձևերն առանձին-առանձին:

1.Միավորվում են մի քանի առնչակից առարկաների ծրագրեր: Այս մոտեցումն արդարացված է, քանի որ դրա հիմքում ժամանակի և երեխայի մտածողական հնարավորությունների հաշվառումն է: Այս դեպքում չի խաթարվում՝ որոշակի տարիքում, տվյալ դեպքում՝ տարրական դասարաններում, երեխայի աշխարհի մասին միասնական, ամբողջական ընկալումը:

2.Տարբեր առարկաներից ձեռք բերված կարողությունները դրսևորվում են որևէ առարկայի դասաժամին: Այս երևույթը ծանոթ է նաև միջառարկայական կապեր անվանումով: Նույն դասաժամին տարբեր բնույթի աշխատանքների մասնակից դառնալով և զանազան գործողություններ կատարելով՝ երեխաները ձերբազատվում են միօրինակության ձանձրույթից: Այդ կերպ նրանք հետաքրքրությամբ են մասնակցում ուսումնական գործընթացին և առավել խոր ընկալում դասանյութը:

3.Նույն թեման կամ գաղափարը դիտարկվում են տարբեր ուսումնական առարկաների դասերին:

Եթե տարրական դպրոցում երեխայի բոլոր զգայարաններն ու մտածողության ձևերը լիարժեքորեն մասնակցեն գիտելիքի ձեռքբերմանը, ապա միջին և ավագ դպրոցներում առավել հարթ և դյուրին կընթանա ուսումնառությունն ու անձի կայացումը: <<Չափազանց կարևոր է՝ ճանաչել մարդու մտածողության բոլոր ձևերը և դրանց զուգորդման տեսակները,-գրում է Հ.Գարդները: -Մենք իրարից այսքան տարբեր ենք հիմնականում այն պատճառով, որ ունենք մտածողության զանազան զուգորդումներ: Եթե մենք կարողանանք ճանաչել դրանք, ապա հնարավորություն կունենանք լուծել այն հիմնախնդիրները, որոնք ծառացած են մեր առջև>>:

4.Մայրենիի դասընթացի բազմակողմանի դրսևորումները ներառվում են ուսումնական մյուս առարկաների մեջ: Մայրենին նպատակաուղղված է տարրական դպրոցում դասավանդվող այլ առարկաների առավել դյուրին ընկալմանը, իսկ մյուս առարկաներն իրենց խնդիրները լուծելիս հենվում են երեխաների կողմից մայրենիի իմացության մակարդակների վրա:

Անառարկելի է, որ մայրենին դպրոցի բոլոր աստիճաններում սերտորեն առնչվում է ուսումնասիրվող բոլոր առարկաներին: Այն արտացոլում է իրականության բոլոր կողմերը, և առանց մայրենիի տիրապետման հնարավոր չէ ծավալել մտածական որևէ գործունեություն: <<Լեզուն մտքի երևացող շերտն է>>, ասել է Ջեյմս Բրիթոնը>>: Մաթեմատիկայի վարժությունը կամ խնդիրը լուծելու համար երեխան պիտի կարողանա կարդալ և հասկանալ այն: Իսկ մայրենիի

դասերը տարրական դասարաններում հենց այդ նպատակին են միտված, որպեսզի երեխան կարդա, հասկանա և վերարտադրի կարդացածը:

<<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի դասավանդումն սկսվում է երկրորդ դասարանից: Սովորողը պիտի կարողանա պատմել կարդացածը, պահպանել դրա տրամաբանական հաջորդականությունը, ակտիվացնել բառապաշարը նոր հանդիպած բառերով, մաքուր և հստակ արտաբերել ասելիքը, կապակցված խոսք կառուցել: Սրանք այն խնդիրներն են, որոնք դրված են մայրենիի առջև:

Թվարկված բոլոր մոտեցումները նպաստում են, որ տարրական դասարանների երեխան ուսուցումը դիտարկի որպես ճանաչողություն, որի ընթացքում նրա մեջ կզարգանան մի շարք անհրաժեշտ կարողություններ: Տարրական դասարաններում ուսումնական առարկաների բազմաբնույթ միասնացումը, այսինքն՝ ճանաչողության ամբողջականության պահպանումը ուսուցման արդյունավետության բարձրացման կարևորագույն գործոն է և ուսուցման արդիական նպատակ:

ԳԼՈՒԽ 2

ՄԱՅՐԵՆԻ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՔԱՌԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐՆԵՐՈՎ

2.1 ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՄԱՅՐԵՆԻ ԴԱՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Մեր դասալսումների և մանկավարժական պրակտիկայի ընթացքում բացահայտել ենք, որ միջառարկայական կապերը կարելի է կիրառել մայրենիի դասի բոլոր փուլերում: Այս խնդրի լուծմանը մեծապես նպաստում է մայրենիի դասագրքերի թեմատիկ սկզբունքը:

Տարրական դպրոցի ծրագրով նախատեսված <<Մայրենի>> առարկան ընձեռում է ինտեգրված դասեր կազմակերպելու ընդարձակ հնարավորություն: Գրեթե յուրաքանչյուր դաս կարելի է կապել <<Տեխնոլոգիա>>,

<<Մաթեմատիկա>>, <<Երաժշտություն>>, <<Ես և շրջակա աշխարհը>> և <<Կերպարվեստ>> առարկաների հետ:

Որովհետև ինտեգրված դասերն առավել տարողունակ ու բովանդակալից են դարձնում դասի գործընթացը, աշակերտները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում այդ դասերի նկատմամբ: Միաժամանակ նկատել ենք, որ ուսումնասիրվող առարկան հետաքրքիր է դառնում այն ժամանակ, երբ սովորողները կյանքում տեսնում են դասերի ժամանակ ձեռք բերած գիտելիքների և կարողությունների կիրառելիությունը, կարևորությունը և անհրաժեշտությունը: Զուգադրումն ու եռադրումը հենց այդ նպատակներին են ծառայում:

Հայտնի է, որ տարրական դպրոցում լեզվական գիտելիքների ուսումնասիրումը իրականացվում է գործնական եղանակով: Գիտական սահմանումներ տրվում են այն չափով, որքանով գործնական վարժությունների հիման վրա աշակերտները հասնում են ընդհանրացումների և եզրակացությունների, ուսուցչի օգնությամբ՝ նրանք ընկալում են եզրույթները և խոսքի մեջ դրանց կիրառման օրինաչափությունները:[**2, էջ 9**]:

Աշակերտների որոնողական և համագործակցային աշխատանքային ձևերն ավելի ակտիվ բնույթ են կրում զուգադրումներով և եռադրումներով իրականացվող դասի ընթացքում: Առարկաների զուգադրումները և եռադրումները և դրանց փաստացի նյութի շուրջ կատարվող աշխատանքները, բնականաբար, բխում են բնագրի բովանդակությունից:

Մեր դասալսումների ժամանակ նկատել ենք, որ տարրական դասարանի աշակերտները հաճախ ի վիճակի չեն լինում ինքնուրույն ներկայացնել դասագրքի մեթոդական կառույցում առաջադրված բոլոր հարցերի պատասխանները: Այս դժվարության հաղթահարմանն օգնում են միջառարկայական կապերը, որոնք ուսուցչին հնարավորություն են տալիս լրացնելու աշակերտների բազմաբնույթ մտածողության զարգացմանը՝ հնարավորություն ստեղծելով, առարկաների միջև առկա կապերի ցուցադրմամբ, հաղորդակցվել գիտության ու կյանքի տարբեր բնագավառների զանազան երևույթների, պատճառահետևանքային կապերին և օրինաչափություններին: Այդ ճանապարհով նրանք աստիճանաբար ձեռք են բերում ինքնուրույն

աշխատանքի կարողություն, ինչը կարևոր ուղենիշ է դառնալու՝ նրանց հետագա ամբողջ կյանքի ընթացքում՝ շարունակական կրթության խոչընդոտները հաղթահարելու, ինքնուրույն ուսուցման, կատարելագործման և բազմակողմանի զարգացման առումով:

Մեր դասալսումների և հատուկ ուսումնասիրությունների ժամանակ նկատել ենք, որ ուսուցման գործընթացում երբեմն նույնացվում են սոսկ միջառարկայական կապեր հաստատող և, այսպես կոչված, ինտեգրված դասերը:

Ուստի մասնագիտական գրականության մեջ կարևորվում է ինտեգրվող թեմայի գլխավոր նպատակի որոշումը: Երբ որոշված է թեմայի ուսումնասիրման ընդհանուր նպատակը, հնարավոր է առարկաների բովանդակությունից ընտրել միայն այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են տվյալ դասի նպատակին հասնելու համար: Ցավոք, դեռևս ստեղծված չեն բավականաչափ ինտեգրացված դասագրքեր, ընդգծված և համակարգված չեն ուսումնական նյութերը: Մենք նկատել ենք, որ այս խնդիրն ուսուցչին դժվարության առջև է կանգնեցնում: Ստացվում է, որ ի՛նքը պիտի նախապես պլանավորի, թե տվյալ առարկայից այս կամ այն թեման և ենթաթեման անցնելիս ինչպիսի կապեր կարելի է ստեղծել հարակից առարկաների միջև:

2.2 ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ԹԵՄԱՏԻԿ ՔԱՌԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ

Առարկան՝ Մայրենի

Դասարանը՝ Երկրորդ,

Ժամաքանակը՝ 2 դասաժամ

Դասագիրքը՝ Ինքնուրույն ընթերցանության նյութեր, Ա. Գալստյան, Ռ.Խարազյան, Լ.Ավագյան, Ա.Բալայան, <<Էդիթ Պրինտ>>, 2010, էջ 57, ըստ Հ.Արթենյանի

Թեման՝ Գարուն, ըստ Հ. Արթենյանի

Քառադրված թեմատիկ միավորներ՝ <<Կերպարվեստ>>, <<Տեխնոլոգիա>>, <<Ես և շրջակա աշխարհը>>, <<Մաթեմատիկա>>:



Ուսումնասիրվող նյութը	**Զուգադրվող առարկաները**	**Զուգորդվող նյութերը**	**Կիրառվող մեթոդական հնարները**
Առարկա՝Մայրենի Թեմա՝Հ. Արթենյանի «Գարուն» **Դասագիրքը՝** Ինքնուրույն ընթերցանության նյութեր, Ա.Գալստյան, Ռ.Խարազյան,	«Կերպարվեստ» «Մայրենի»	Թղթի վրա բնօրինակից կամ ստեղծագործաբար պատկերել գարնանային տեսարան:	**Կանխագուշակում**
	«Տեխնոլոգիա» «Մայրենի»	Երեխաները ծեփամածիկով կամ գունավոր թղթերով կպատրաստեն կենդանիներ, թռչուններ, ծաղիկներ և կնկարեն նրանց:	Բառապաշարի հարստացում Բանալի բառեր
Լ.Ավագյան, Ա.Բալայան, <<Էդիթ Պրինտ>>, 2010, էջ 57, ըստ Հ.Արթենյանի	«Ես և շրջակա աշխարհը» «Մայրենի»	Երեխաները հանրագիտարանից լրացուցիչ տեղեկություններ կներկայացնեն թռչունների և ծաղիկների մասին:	
	«Մաթեմատիկա» «Մայրենի»	Աշակերտները կհաշվեն գործող անձանց, կհամեմատեն նրանց դրական	Մտագրոհ.

		որակները, կհաշվեն, թե կանաչ գույնը քանի անգամ է գործածվել բանաստեղծության մեջ:	Աշակերտները կներկայացնեն գարունը ներկայացնող նկարագրական արտահայտություններ:

Զուգադրման ճանապարհով իրականացված դասի դիտարկում

Միջառարկայական կապերի հաստատման միջոցով և համապատասխան կարողությունների զարգացման ակնկալիքով ընտրվել է Հ. Արթենյանի **«Գարուն»** բանաստեղծության ուսումնասիրումը, որի բովանդակության քննարկման ընթացքում սովորողները կիրառեցին իրենց գիտելիքները, ձեռք բերեցին նոր տարաբնույթ տեղեկույթ «Մաթեմատիկա», «Կերպարվեստ», «Ես և շրջակա աշխարհը» և այլ առարկաներից՝ այս ճանապարհով ամբողջացնելով ու ճշգրտելով իրենց պատկերացումները գարնանային բնության, կենդանիների կյանքի, մարդկանց աշխատանքի վերաբերյալ:

Միջառարկայական զուգադրումների և եռադրումների, քառադրումների, հնգադրումների միջոցով համապատասխան կարողությունների և հմտությունների զարգացում:

<<Մաթեմատիկա>>: Աշակերտները հաշվեցին բանաստեղծության մեջ ներկայացված «անձանց», համեմատեցին նրանց, հաշվեցին, թե **կանաչ** բառը քանի անգամ է գործածվել բանաստեղծության մեջ:

<<Կերպարվեստ>>: Գունավոր թղթերով բնօրինակից կամ ստեղծագործաբար պատկերեցին գարնանային տեսարան՝ օգտվելով դասագրքից:

<<**Տեխնոլոգիա>>:** Աշակերտները ծեփամածիկով կամ գունավոր թղթերով պատրաստեցին ծաղիկներ:

<<Ես և շրջակա աշխարհը>>: Երեխաները կարողացան հանրագիտարանից լրացուցիչ տեղեկություններ հավաքել թռչունների և ծաղիկների մասին (ըստ հանձնարարության):

Կիրառվող մեթոդական հնարները: «Կանխագուշակում» (Մեկ, երկու դասի ընթացքում), «Բանալի բառեր», «Մտագրոհ»:

Լեզվական նյութ՝ հատկանիշ ցույց տվող բառերի մասին աշակերտների ունեցած գիտելիքների և կարողությունների ամրակայում:

Նպատակը.

Աշակերտները՝

- վերհիշեցին բանաստեղծության ժանրային առանձնահատկությունները,
- ձեռք բերեցին տեղեկություններ թռչունների, բույսերի, գարնանային բնության երևույթների մասին, համեմատեցին դրանք (օգտվելով հանրագիտարանից) և ամբողջացրին իրենց տեղեկությունները,
- սովորեցին գարունը բնութագրող նկարագրական նոր բառեր,
- բնագիրը ընթերցեցին հասկանալով և արտահայտիչ,
- կարողացան բնութագրել գոյականը հատկանիշ ցույց տվող բառերով,
- կարողացան բանավիճել դիտարկվող հարցերի շուրջ (օրինակ՝ «Ինչո՞ւ առուն, (ծիծեռնակը, հովը, ...,) միայնակ չէր կարող գարուն բերել»),
- կառուցեցին նկարագրական խոսք՝ գործածելով նորաձանոթ բառերն ու արտահայտությունները (դասի ընթացքում կատարած աշխատանքները ներկայացնելիս):

Դասի ընթացքում կիրառվել է հետևյալ մեթոդաբանությունը՝

Սովորողները իրականացրել են **բանալի բառերի յուրացում և իմաստավորում, մտագրոհի միջոցով** բացահայտել, թե գարուն բառն ինչ զուգորդումներ է առաջացնում իրենց մտապատկերում: Դրանք քարտեզագրվել են հետևյալ կերպ:



Գծ. 1

Այնուհետև օգտագործելով փոքրածավալ նախադասություններում սովորողները զարգացնում են լեզվական և հաղորդակցական հմտությունները, հարստացվում է բառապաշարը, ստեղծվում տրամաբանական կապ այլ առարկաների հետ: Այս գործընթացում սովորողները վերհիշում են <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայից իրենց ձեռք բերած գիտելիքները գարնանային երևույթների մասին:

Ինքնուրույն ընթերցանության միջոցով սովորողները կատարել են բառարանային աշխատանք՝ հիմնվելով նախորդ առաջադրանքի վրա, ընդգծել են այն բառերը, որոնք գործածվել են բանաստեղծության մեջ:



Գծ. 2

Այնուհետև բնագրի շուրջ իրականացված աշխատանքների ընթացքում աշակերտներին ուղղորդվել են հետևյալ հարցերը.

-Ներկայացրե՛ք քչքչան գետի նկարագիրը բառերով:

-Եկե՛ք մեկնաբանենք **քչքչան** բառի իմաստը:

-Ինչո՞ւ է սարյակը ծվծվում, ծառը՝ շրշում, խոտը՝ խշշում:

-Եկեք ներկայացնենք՝

- ինչի՞ մասին կարող է ծլվլալ ծիծեռնակը:
- Ի՞նչ կարող է ասել ծառը շրշալիս:
- Ո՞ր բառերով է խոտը խշշում:

-Ինչո՞ւ է հեղինակը գործածել մետասքաթե հովիկ, շքեղ գարուն բառակապակցությունները:

- Հաշվե՛ք և որոշե՛ք, թե **գարուն** և **կանաչ** բառերը քանի՞ անգամ են գործածվել բանաստեղծության մեջ, և ո՞ր բառերի հետ են դրանք գործածվել:

Արդյունքում երեխաները գծանկարի միջոցով ներկայացնում են հետևյալ բառակապակցությունները.



գ) Բառապաշարի հարստացում

Ուսուցչի կողմից առաջադրվում են հարցեր՝ պարզելու համար, թե **կանաչ** բառը որ բառերի հետ է կապված, որ բառերն են լրացնում **գարուն** բառին, նշել դրանց տրվող հարցերը:

Հարցազրույց իրականացվեց նախապես մշակված հարցերի շուրջ: Այսինքն՝ զրույցն ընթացավ հարց ու պատասխանի միջոցով: Հարցերը կազմված էին հմտորեն. կարճ, որոշակի և հստակ, հարցերի մեջ չկային անծանոթ բառեր, մենք համոզվեցինք, որ աշակերտները գիտեն կամ կարող են որոշել և ձևակերպել հարցի պատասխանը, ամեն մի հարց նախապատրաստում էր մյուսին, հարցերը գնում էին պարզից դեպի բարդը և բազմապատասխան էին:

Մենք կարևորեցինք մի քանի հանգամանք.

- Հարցազրույցի հարցերը մշակելիս մենք նախապատրաստվեցինք նաև այն անակնալներին, որոնք կարող են առաջացնել երեխաների պատասխանները, այսինքն՝ որոշեցինք պատասխանների տարբերակներ, որպեսզի, եթե հանկարծ նրա ակնկալիքները չիրականանան (երեխաները տալիս են նաև անսպասելի պատասխաններ), չզարմանանք, չշփոթվենք, ընդհակառակը, ընթացք տանք նրանց դատողություններին՝ թույլ տալով ազատ արտահայտվել, կարծիքներ հայտնել, դատողություններ անել,

ընդհանրացումներ կատարել: Ընդ որում՝ մենք կարևորեցինք ոչ ստանդարտ մտածող երեխաների մտքի թռիչքը և նպաստում նրանց առաջընթացին:

- **Հարցազրույցը կիրառեցինք ԽԻԿ համակարգով աշխատելու բոլոր փուլերում, թե՛ իբրև խթանող, թե՛ իբրև սովորածն իմաստավորող, և թե՛ իբրև ձեռք բերածը կշռադատող միջոց:**
- Յուրաքանչյուր փուլում կազմակերպվող հարցազրույցի հարցերը մշակեցինք այդ փուլին հարմար բառապաշարով և լեզվական կառույցներով. **խթանման** փուլում տրվող հարցերը կարող են լինել այսպիսիք՝ ի՞նչ **եք կարծում, ի՞նչ կարող է լինել, ի՞նչն է մեզ հուզում.**
- **իմաստավորման** փուլում տրվող հարցեր՝ **ինչու՞ այդպես եղավ, արդյո՞ք հերոսը ճիշտ էր, դուք ի՞նչ եք կարծում, հեղինակը սիրու՞մ է իր հերոսին** և այլն.
- **կշռադատման** փուլում աշակերտներին հարցազրույցի մեջ ներգրավվող հարցեր՝ **դու ինչպե՞ս կվարվեիր, ո՞րն է պատճառը, ինչու՞ է հեղինակն այսպես վերնագրել, ո՞ր բառերն են մեզ հուշում այդ մասին, դուք ու՞մ կուզեիք նմանվել** և այլն: **[6, էջ 100]:**

Խմբային աշխատանք բնագրի շուրջ

- Աշակերտները բաժանվում են 4-5 հոգանոց համագործակցային խմբերի:
- Հանելուկի ընթերցում:
- Պատասխանները գրված են A4 չափի թղթերի վրա: Տրված են խմբերի անվանումները:



Հանելուկներ

Ի՞նչն է հագնում կանաչ զմրուխտ,
Երեք ամսով գալիս մեզ մոտ,
Ծիլ ու ծաղկունք չորս կողմ փռում,
Թևին տալով՝ թռչում,գնում: ***(Գարուն)***

Գեղեցիկ է հոտավետ,
Աճում է նա դաշտերում
Եվ իր բույրով մեզ գերում: ***(Ծաղիկ)***

Ի՞նչն է, որը առանց ոտքի,
Ձիուց արագ վազել գիտի,
Ողջ աշխարհում խիստ օգտակար,
Անունը՝կարճ, ինքը՝երար: ***(Գետակ)***

Թևեր ունի գույնզգույն,
Ծիլ ու ծաղիկ է սիրում,
Նա մեզ ամենից ճանաչ
Թռիքչը՝կարճ, կյանքը՝կարճ: ***(Թիթեռ)***

- Աշակերտներին առաջարկեցինք սեղանին դրված տուփից հերթականությամբ վերցնել համարակալված 1-4 թվանշաններով թղթի կտորները:

Հանձնարարեցինք կարդալ հանելուկները, գուշակել պատասխանները. նրանց ուղղորդեցինք, որ ճիշտ խմբավորեին ու համադրեին իրենց ձեռքերում գտնվող կտորները, որպեսզի ստանային պատասխանների պատկերները:

Խրախուսելի էր աշխատանքը կազմակերպել տարբեր ձևերով՝ տեղեկույթի դուրս բերում, պատկերման, կոմպոզիցիայի, ծեփամածիկի, տեքստային բովանդակության՝ հաշվի առնելով սովորողների կարողություններն ու նախասիրությունները:

Նախապես տրվել են աշխատանքային նյութեր՝ հանրագտարան, գունավոր թղթեր, ծեփամածիկ, սոսինձ, մկրատ: Պարզ հրահանգման միջոցով տրվել են ցուցումներ, ամրագրվել է աշխատանքային պլանը գրատախտակին, ինչպես նաև սահմանվել է աշխատանքային ժամանակը:

Ընթացք

Առաջին խմբին տրվում է Ա. Դալլաքյանի «Զարմանահրաշ բնաշխարհ» գրքույկը և «Ի՞նչ է, ո՞վ է» հանրագիտարանի հատորները: Հանձնարարվում է

տեղեկություններ դուրս գրել բնագրում հանդիպող ծաղիկների և թռչունների մասին (ծիծեռնակ, սարյակ, ձնծաղիկ, վարդ):

Երկրորդ խմբին տրվում է գունավոր թղթեր, ծեփամածիկ, սոսինձ, մկրատ և հանձնարարվում է պատրաստել ստեղծագործության կերպարներից որևէ մեկը (առվակ, ծիծեռնակ, սարյակ, հովիկ, կանաչ ծառ, խոտ, ձնծաղիկ, վարդենի, ...)

Երրորդ խմբին տրվում են գունավոր մատիտներ և գրիչներ և հանձնարարվում է նկարել այգի ու անտառ, գործածելով բնագրի բառերը և ներկայացնել նկարագրական խոսքով:



Գարուն է

Թերևս գարունը նոր է բացվել, սակայն ցն
ցիկը հանել է իր գլուխը։ Գարնան ամենա
բեր բույսերը արագորեն ու ֆիքեռնակը
վերաբարձել են։ Խոտերը սկսում են կանաչ
իսկ ծառս սոցդը անվերջ լսվում է։ Գիդ
առվակը հոսում է, վարդերին բոցոգել է։
ուրախ շողում է, կանաչ ծառերի վրա ֆիգ
ները բոցկոտում են ծաղիկ-ծաղիկներանց ֆ
ցը անընդհատ լսվում էին։ Գարնանը հաճ
նաև անձրևներ են գալիս։

Գիրգոյան Հրաչեն



Գարուն է։ Հրաշալի վերարարձել էին
տաք երկրներից։ Կապույտ երկնքում ծաղրում էին
ֆիքեռնակները։ Երկնքում շողում էր արևը։ Բակում բո
բում էին վարդերները։ Հանկարծ փչեց ցնցող քա
մի։ Անցավ գարնանային անձրևը։ Հնչեցին հնոր
սիրելի գեղեցիկ աղմուկները։ Զնդեցիկ, կանաչ ծա
ռերի վրա, լսվում էր ֆիքիկների երգեցիկ, ամենա
նոր կանաչել էին խոտերը։ Ասրերում արդեն
իրենց գլխիկներն էին բարձրացրել ցնցաղիկ-
ները։ Սիրում եմ գարունը։

Սարգսյան
Վանդա Պետրիկի

Չորրորդ խմբին հանձնարավում է գրել փոքրածավալ շարադրություն «Գարուն» վերնագրով՝ հարկ եղած դեպքում օգտագործելով նաև Գծ. 1-ում զետեղված բառերն ու բառակապակցությունները:

2-րդ խմբի անդամները պատրաստել էին նաև կոմպոզիցիաներ:

Ներկայացում

Սահմանված աշխատաժամանակն ավարտվելուն պես՝ յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր անդամների կատարած աշխատանքները՝ ներառելով բոլորի խմբային ներդրումը:

Գնահատում

Յուրաքանչյուր խումբ գնահատվեց ըստ իր անդամների կատարած աշխատանքների՝ հաշվի առնելով խմբի թիմային աշխատանքը, համագործակցությունը անդամների միջև, դերաբաշխումը, ստեղծագործականությունը, ներկայացման հմտությունները և ժամանակը: Վերոհիշյալ բաղադրիչների բաղկացած սանդղակը սովորողներին տրվել էր նախապես:

Անդրադարձ

- Աշակերտներին առաջադրվում է հիմնավորել, թե ինչու հերոսներից միայն մեկը չէր կարող բերել գարունը:

Դիտարկում.

- Որոշել բանաստեղծության տրամադրությունը, վերնագրի համապատասխանությունը բնագրին:
- **Բանաստեղծության գաղափարի բացահայտում.**

Նախ հարցազրույցի միջոցով աշակերտները քննարկեցին բանաստեղծության ժանրային առանձնահատկությունները՝ այն համեմատելով պատմվածքի, հեքիաթի հետ:

Աշխատանք արտահայտիչ ընթերցանության շուրջ:

Գարունն այնքա՜ն ծաղիկ է վառել ...

Արևն ավելի պայծառ ու ջերմ է, ձյունից ազատված հողը թեթևորեն շնչում է, օդի մեջ թարմ բույրեր կան, ականջ է շոյում թռչունների ճռվողյունը, հողից իրենց քնքուշ գլխիկներն են հանել առաջին ձնծաղիկները: Գարուն է: Իսկ ո՞վ բերեց գարունը ...:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժամեթոդական գրականության վերլուծության և ինտեգրում պարունակող դասերի ուսումնասիրությունների արդյունքում մենք հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

1.Զուգադրումների և եռադրումների միջոցով իրականացվող միջառարկայական կապերի հաստատումը ոչ միայն ուսուցման արդյունավետության բարձրացման, այլև սովորողների աշխարհայացքի ձևավորման, աշխարհի նկատմամբ նրանց հայացքների կազմավորման տեսակետից շատ կարևոր ու անփոխարինելի նշանակություն ունեն: Ուստի ուսուցման ընթացքում որևէ երևույթի առանձին կողմի ճանաչումը՝ առանց դրա մյուս կողմերի հաշվառման, չի կարող ամբողջական պատկերացում տալ տվյալ երևույթի մասին, քանի որ բնության մեջ չկան բացարձակ իմաստով առանձնացված առարկաներ, երևույթներ ու գործընթացներ:

2.Միջառարկայական կապերի շնորհիվ համակարգվում են տարրական դպրոցում դասավանդվող տարբեր առարկաներից սովորողների ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները: Դրանք նպաստում են ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման հիմնական խնդիրների նկատմամբ միասնական մոտեցմանը:

3.Ուսումնասիրություններն ու մեր պրակտիկ փորձը ցույց են տվել, որ առարկայական զուգադրումներն և եռադրումները նպաստում են ուսումնական նյութի խորքային յուրացմանը, անցածի և անցնելիքի միջև տրամաբանական կապերի ստեղծմանը, ձեռք բերած գիտելիքների ու կարողությունների փոխանցմանն ու կիրառմանը: Սովորողները երևույթների միջև կապեր են տեսնում, բացատրություններ են տալիս, երևույթները քննում են տարբեր կողմերից: Մայրենիի դասաժամին երևույթը լեզվական և երևակայական մտածողությամբ է դիտարկվում, մաթեմատիկայի դասաժամին՝ տրամաբանական մտածողությամբ, տեխնոլոգիայի ժամին՝ տարածական և ստեղծագործական, իսկ երգեցողության ժամին՝ զգայական մտածողությամբ:

4.Մայրենիի առարկայական ծրագիրը, դասագրքերը և դասերը տալիս են զուգադրված կամ եռադրված աշխատանք իրականացնելու հնարավորություն,

ուսումնական ծրագրերի միջոցով (միջառարկայական կապերի վրա հիմնված) աշակերտներին տալիս է ավելի շատ սովորելու հնարավորություն՝ միմյանց կապելով տարբեր առարկաների ընդգրկման ոլորտները և արտացոլելով իրական աշխարհը՝իր բոլոր կողմերով: Արդյունքում՝ ձեռք բերած գիտելիքներն «օրգանապես լրացնելով և հարստացնելով միմյանց՝ անհրաժեշտ պայմաններ են ձևավորում իրականության առավել խոր, համակողմանի ընկալման ու իմաստավորման համար>>: Աշակերտներն ստանում են գեղագիտական, բարոյական դաստիարակություն և ըստ այդմ՝ կյանքին նախապատրաստվելու լայն հնարավորություններ: Այդ պատճառով էլ դրանք չեն կարող զուտ մայրենիի դասեր համարվել:

5.Զուգադրումները և եռադրումները նպաստում են կրտսեր դպրոցականների բոլոր զգայարանների և մտածողության ձևերի լիարժեք մասնակցելուն, գիտելիքի ձեռքբերման գործընթացին: Այս դեպքում միջին և ավագ դպրոցներում առավել հարթ և դյուրին կընթանա ուսումնառությունն ու անձի կայացումը:

Ուսուցիչը նաև պետք է ձգտի այն բանին, որ յուրաքանչյուր աշակերտ խմբային աշխատանքի ներկայացման գործընթացում գիտակցի իր դերի կարևորությունը: Ուսուցիչը սեփական օրինակով պետք է երեխաների գիտակցությանը հասցնի, որ նույնիսկ իր բացակայության ընթացքում պետք չէ վախենալ սխալներից/բացատրի, որ կարևոր է յուրաքանչյուրի աշխատանքը խումբը ավելի կազմակերպված դարձնելու համար, յուրաքանչյուրը պետք է արտահայտի իր սեփական կարծիքը, քանի որ դա պահանջում է իր ստանձնած դերը: Եթե աշխատում են աշակերտներից յուրաքանչյուրը, բարձրանում է երեխաների ինքնագնահատականը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավագյան Ք., Դասի պլանավորման նմուշօրինակ, Գիտամեթոդական հանդես, Նախաշավիղ, 5, 2013, էջ 52:
2. Բոյաջյան Վ., <<<<Մայրենի>> և <<Մաթեմատիկա>> առարկաների ինտեգրման ուսուցողական արժեքը>>, Նախաշավիղ 2017 № 5, էջ 9:
3. Գալստյան Ա., Խարազյան Ռ., Ավագյան Լ., Բալայան Ա., Ինքնուրույն ընթերցանության նյութեր, 2-րդ դասարան, <<Էդիթ Պրինտ>>, 2010թ., էջ 57:
4. Գալստյան Ա., Խարազյան Ռ., Ավագյան Լ., Բալայան Ա., Ինքնուրույն ընթերցանության նյութեր, 3-րդ դասարան, <<Էդիթ Պրինտ>>, 2010թ., էջ 30:
5. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006:
6. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015, էջ 100:
7. Հովհաննիսյան Ա., Սողոմոնյան Մ., <<Անհատական մոտեցման դերը կրթական համակարգի փոփոխման պայմաններում>>, <<Ընտանիք և դպրոց>>, գիտամեթոդական ամսագիր, ՀՀ կրթության և գիտ, նախ. ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտ, 2012, №3, էջ 4:
8. <<Մարդ և հասարակություն>> գիտամեթոդական վերլուծական ամսագիր, ՀՀ կրթության և գիտ. Նախ. ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտ, 2011, № 3, էջ 4:
9. Մովսիսյան Մ.Ա., <<Գիտելիքների միավորումը մանկավարժության մեջ>>, Երևան <<Լույս>>, 1983, էջ 5, 23, 27:
10. Պետրոսյան Ս., Խաչատրյան Ս., Խաչատրյան Հ. և այլն, Հասարակագիտության ինտեգրված ուսուցում. ուսումնական ծրագրի մշակում և թեմատիկ միավորներ, (Ձեռնարկ մանկավարժների համար), Երևան, ԱՅՌԵՔՍ, 2006, էջ 47:
11. Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Թորոսյան Կ. Ջիլավյան Ե., <<Մայրենի-3>>, Երևան, <<Մանմար>>, 2011, էջ 142:

12. Օհանյան Հ., Քայլ առաջ դեպի ընթերցանություն կամ ինչպես երեխային դարձնել ընթերցող, Գիտամեթոդական հանդես, Նախաշավիղ, 4, 2017 , էջ 53:
13. Зверев И.Д., Максимова В.Н. ''Межпредметные связи в современной школе''.-М.: Педагогика, 1981. стр.4.
14. Зверев И.Д., ''Взаимная связь учебных предметов''. – М. 1977. с.43.
15. Максимова В.Н. ''Межпредметные связи в процессе обучения.-М.: Просвещение, 1988. с. 39.